ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 7068

«02» հոկտեմբերի 2023թ.

ԷՅ. ԷՄ. ԵՔՍ. ՄԻԿՐՈ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ԱՎԴԱԼՅԱՆԻՆ
ԴՈՆԵՌ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար պրոյեկցիոն էկրանների, հեռուստացույցների և հեռախոսային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

ԷՅ. ԷՄ. ԵՔՍ. ՄԻԿՐՈ ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը:

ԴՈՆԵՌ ՍՊԸ

- հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ) մուտքագրված (լրացված) չէ 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• Հավելված 1-ին վերաբերող տեղեկատվության մեջ, ինչպես նաև դիմում-հայտարարության առաջին նախադասության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրի փոխարեն նշված է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏվ-ԷԱՃԱՊՁԲ-23/1-ՏՆՏ4» ծածկագիրը,

• դիմում-հայտարարության առաջին նախադասությունում սխալ է նշված պատվիրատուի անվանումը՝ «Դատական դեպարտամենտ»-ի փոխարեն նշված է «ՀՀ ազգային անվտանգության ծառայություն», ինչպես նաև Համակարգում նշված տեղեկատվության համաձայն ԴՈՆԵՌ ՍՊԸ-ն մասնակցել է ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժիններին, այն դեպքում, երբ հիշյալ նախադասության մեջ նշված են հետևյալ չափաբաժինները՝ «1,2,3,4,5,6,7,8,9,10,11»,

• դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում «հեռախոսահամարն է» դաշտում նշված չէ մասնակցի հեռախոսի համարը, այլ նշված է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն (բացակայում է «էլեկտրոնային փոստի հասցեն է» դաշտը), իսկ «ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը, այլ նշված է մասնակցի հեռախոսի համարը,

• դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

• դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 03-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/35» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788